

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ/վարչական շենքի/ ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 006

Երկու հազար տաս թվականի մարտի տասնվեցին

ք. Միսիան

Մենք՝ ԱՎԵՏ ԼԱՎԵՆՏԻ ՄԱՐԳՍՅԱՆՍ, ծնված 22.09.1968 թ., անձնագիր AG 0647892, տրված 22.03.2006թ. 007-ի կողմից, հաշվառված՝ ք. Միսիան, Իսրայել-Օրի փողոց, 2.4, բն.4, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ԱՐՄԵՆ ԿՈՄՈՆԱՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ, ԱՐՄԵՆ ԿՈՄՈՆԱՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆՍ, ծնված 17.07.1968թ., անձնագիր AH 0294909, տրված 051-ի կողմից 16.01.2007թ., հաշվառված՝ ք. Միսիան, Շիրվանգադե փողոց, 2.2ա, բն.22, այսուհետ «ՎԱՐՉԱՏՈՍ» և ՀՀ կառավարությանն առնչվող Պետական Եկամուտների կոմիտե, որի անունից լիազորագրով հանդես է գալիս Սյունիքի տարածաշրջանային մաքսատան տնտեսվար ԼԵՆԴՐՈՒՇ ԴԱՎԹՅԱՆԸ, ծնված 30.08.1953թ., անձնագիր AA 0362870, տրված 19.06.1996թ. 051-ի կողմից /վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 19.06.2011թ. /, հաշվառված ք. Միսիան, Ն. Ստեփանյան փողոց, տուն 14, այսուհետ «ՎԱՐՉԱԿԱՆ» կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով ՎԱՐՉԱՏՈՍՆ պարտավորվում է վճարի դիմաց ՎԱՐՉԱԿԱՆԻ ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել 1.2 կետում նշված գույքը:

1.2. Վարձատուն պարտավորվում է Վարձակալին հանձնել հետևյալ գույքը՝ ՀՀ Սյունիքի մարզի Շաքի գյուղում գտնվող Երևան-Գորիս ավտոմայրուղուն կից ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ 100/հարյուր/ քմ տարածք, այսուհետ «ԳՈՒՅՔ»:

Ամբողջ վարչական շենքը բաղկացած է 179,2 /հարյուր յոթանասուն ինն ամբողջ երկու/ քմ. ընդհանուր մակերեսից և 0,054 / զրո ամբողջ զրո հիսունչորս / հա հողամասից:

1.3. Գույքը պատկանում է վարձատուին սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է հետևյալ փաստաթղթերով՝ ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Միսիանի տարածքային ստորաբաժանման կողմից տրված 28 մարտի 2006թ. թիվ 2053870 սեփականության վկայականով:

1.4. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Գույքի օգտագործման արդյունքում վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.5. Սույն պայմանագրի 1.2. կետում նշված Գույքը վաճառված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, գրավի արգելանքի և կալանքի տակ չէ, ինչը հաստատվում է ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Միսիանի տարածքային ստորաբաժանման կողմից տրված 04 մարտի 2010թ. թիվ 0231615 միասնական տեղեկանքով:

Ծածկագիր՝ 09-070-140-005:

Օգտագործման նպատակը ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔ:

1.6. Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոխելու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. Պահանջել վարձակալից Գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխան:

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը:

- 2.1.3. Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե վարձակալը Գույքից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան:
- 2.2 վարձատուն պարտավոր է՝
- 2.2.1. Գույքը վարձակալին հանձնել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում:
- 2.2.2. Գույքը վարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով (տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն):
- 2.2.3. Իր հաշվին կատարել Գույքի հիմնական վերանորոգումը:
- 2.2.4. Վարձակալին նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին:
- 2.3. Վարձակալն իրավունք ունի՝
- 2.3.1. Պահանջել վարձատուից սույն պայմանագրի 5.1. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը: Ենթավարձակալության տալ վարձակալությանը վերցված գույքը վարձատուի համաձայնությամբ:
- 2.3.2. Վարձատուից պահանջել իրեն տրամադրել Գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը:
- 2.3.3. Գույքի օգտագործմանն ավբողջովին կամ մասնակիորեն խոչնդոտող թերությունները հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝
- 2.3.3.1. վարձատուից պահանջել անհատուց վերացնելու Գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը:
- 2.3.3.2. վարձատուին նախապես տեղեկացնելով՝ վարձավճարից պահել տվյալ թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերի գումարը:
- 2.3.3.3. Պահանջել վաղաժամկետ լուծելու պայմանագիրը՝ պայմանների խախտման դեպքում:
- 2.3.4. Պահանջել նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար պատասխանատվություն չի կրում, գույքի վիճակը վատթարացել է:
- 2.3.5. վարձատուի կողմից սույն պայմանագրի 2.2.3. նշված պարտականությունը չկատարելու դեպքում:
- 2.3.5.1. կատարել սույն պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտության դեպքում հիմնական վերանորոգումը և ՎԱՐՁԱՏՈՒԻՑ պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին:
- 2.3.5.2. Պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը:
- 2.3.5.3. Պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:
- 2.4. վարձակալը պարտավոր է՝
- 2.4.1. Ժամանակին մուծել Գույքն օգտագործելու համար նախատեսված վճարը /վարձավճարը/ և տվյալ Գույքի համար նախատեսված բոլոր կոմունալ մուծումները:
- 2.4.2. Պայմանագիրը դադարելու դեպքում վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:
- 2.4.3. Գույքը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը:

3. ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

- 3.1. Սույն պայմանագրով ամսական վարձավճարի չափ է սահմանվում 135000 /հարյուր երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը:
- Վարձակալը վարձավճարը կվճարի ամսական կտրվածքով մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա հատկացվելիք գումարը վարձատուին կտրամադրվի մինչև դեկտեմբերի 25-ը հանձնման - ընդունման արձանագրության հիման վրա՝ փոխանցումով/2471500575750000 «ԱՇԻԲ» ՍՊԱԿԱՆԻ Վ/Գ/ 2011-2013 թ թ. մասով պայմանագիրը ուժի մեջ կմտնի խոնապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագրեր:

3.2.Սույն պայմանագրի հետ կապված պետական տուրքի և ծառայությունների համար վճարում է վարձակալը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Եթե վարձակալը պայմանագիրը դադարեցնի հետո չի վերագրվել Գույքը կամ այն վերագրվել է ժամկետի խախտմամբ, ապա վարձատու իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

4.2. վարձատուն պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել վարձակալին կամ պետք է վարձակալի հայտնաբերվեին գույքը զննելիս, կամ գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքիներունն ստուգելիս

4.3.Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի գնի նկատմամբ 0.05 տոկոսի չափով:

4.4.Սույն պայմանագրով նախատեսված տարածքի հանձնման ժամկետի խախտման համար վարձատուի , նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չկատարված մասի գումարի 0.05 /գրո ամբողջ գրո հինգ/ տոկոսի չափով:

4.5.Սույն պայմանագրով նախատեսված վարձատուի նկատմամբ հաշվարկված տույժերը, տուգանքները հաշվարկվում են և հաշվանցվում են վարձատուն վճարման ենթակա գումարից:

4.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.7.Տուգանքի և տույժի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

4.8. Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ քացատությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով սույն պայմանագրով նախատեսված գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

4.9 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրացալը՝ սույն պայմանագրի կողմերից որևէ մեկի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝

ա/ Վարձակալի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

բ/ եթե դա Վարձակալի գործողության կամ անգործության հետևանք չէ.

4.10 Եթե սույն պայմանագրի գնի հիմնավորվածության և արժանահավատության փորձաքննության արդյունքում պայմանագրի գինը որակվում է շուկայական գնից տասը տոկոս բարձր, և Վարձատուն չի համաձայնում այդ չափով գնի նվազեցմանը, ապա Վարձակալը պայմանագիրը միակողմանիորեն լուծում է և չի կրում պայմանագրի լուծման հետևանքով առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը:

4.11 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը վարձատուն ներկայացրել է կեղծ վաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ վարձատուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո վարձակալն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վարձատուն պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել վարձակալի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ վարձակալի ստացածով:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Գույքի վարձակալության ժամկետն է 16.03.2010թ.- 16.03.2013թ. / երկու հազար տաս թվականի մարտի տասնվեցից մինչև երկու հազար տասերեք թվականի մարտի տասնվեցը/:

5.2. Մույն պայմանագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2010թ. մարտի 16-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

5.3. Վարձատուն պարտավոր է անշարժ գույքը Վարձակալին հանձնել 16.03.2010թ-ին հանձնման – ընդունման ակտով:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6.1. վարձատուի պահանջով՝ վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով լուծարվել, եթե վարձակալը

6.1.1. Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության էական կամ բազմակի խախտումներով:

6.1.2. էականորոն վատթարացել է Գույքի վիճակը:

6.2. Մույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը և այլն: Խախտվել է պայմանագրով նախատեսված որևէ կետի պահանջը:

6.3. Մույն պայմանագիրը կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի միակողմանի վաղաժամկետ դադարեցնել, լուծել, պայմանագրի մյուս կողմին նախապես մեկ ամիս առաջ գրավոր տեղյակ պահելով:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Մույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է ՀՀ համապատասխան դատարանի քննությանը:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ - ՄԱԺՈՐ/

Մույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3/երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓՄԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Մույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկ օրինակը պահվում է ՀՀ Միսիան նոտարական տարածքի նոտարի մոտ, իսկ մնացած օրինակները տրվում են կողմերին:

9.2. Մույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Անշարժ Գույքի կադաստրի Պետական կոմիտեի - Միսիանի տարածքային ստորաբաժանումում 30 / երեսուն / օրյա ժամկետում: Պայմանագիրն ընթերցվեց կողմերի կողմից: Պայմանագրի բովանդակությունը բավարարում է կողմերի / պահանջներին: կողմերը հավաստիացնում են, որ պայմանագիրը մոլորության, խաբեության կամ սպառնալիքի/ ազդեցության տակ չեն կնքում, և այն համապատասխանում է իրենց իրական մտադրություններին:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՅԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վ Ա Ր Ձ Ա Տ ՈՒ

Վ Ա Ր Ձ Ա Կ Ա Լ

ԱՎԵՏ ԼԱՎՐԵՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ
Լիազորագրով՝
ԱՐՄԵՆ ԿՈՄՈՒՆԱՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՁՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Լիազորագրով՝
ԼԵՆԴՐՈՒՅՑ ԴԱՎԹՅԱՆ

[Signature]
Ներսիս Եղիշյան

[Signature]
Լենդրոյց Դավթյան

ԱՐՄԵՆ ԿՈՄՈՒՆԱՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ

[Signature]
Ներսիս Եղիշյան


Երկու հազար տաս թվականի մարտի տասնվեցին սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Միսիան տարածքի նոտար ՆՈՐԱՅՐ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ կողմից :
Կողմերը պայմանագիրը ստորագրել են իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են :
ՀՀ Զարգացիական օրմնագրի 611 հոդվածի համաձայն սույն պայմանագրից ծագող իրավունքները մնթակա են գրանցման ԱԳ-Կ-Պետական կոմիտեի Միսիանի տարածքային ստորաբաժանումում 30 /երեսուն/ օրյա ժամկետում:

Գրանցված է սեղանախաչանում *287* 3726125

Գանձված է պետ. տուրք և ժառանգության վճար համաձայն «ՀՀ Պետ. տուրքի (կասկած)» և «Նոտարիչուտի մասին» օրենքների»



[Signature]



Ն.Լ. ԲԱՂՈՒՄՅԱՆ

16.03.2010թ. կնքած թիվ 006 վարձակալության պայմանագրում փոփոխություն
կատարելու մասին

ՀՀ քաղաք Միսիան

Երկու հազար տասնմեկ թվականի փետրվարի մեկին

Մենք՝ ԱՎԵՏ ԼԱՎՐԵՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆՍ, ծնված 22.09.1968թ., անձնագիր AG 0647892, տրված 22.03.2006թ. 007-ի կողմից, հաշվառված ք. Միսիան, Բարայել- Օրի փողոց, 2-4, բն. 4, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ԱՐՄԵՆ ԿՈՍՈՒՆԱՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ, ԱՐՄԵՆ ԿՈՍՈՒՆԱՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆՍ, ծնված 17.07.1968թ., անձնագիր AH 0294909, տրված 051-ի կողմից 16.01.2007թ., հաշվառված ք. Միսիան, Շիրվանզադե փողոց, 2. 2ա, բն. 22, այսուհետ՝ <<ՎԱՐՁԱՏՈՒ>> և <<ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ>> պետական կառվարչական հիմնարկը /գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մ.Խորենացու 3/, որի անունից 31.01.2011թ. տրված N 2414/08 լիազորագրով հանդես է գալիս Մյունիքի տարածաշրջանային մաքսատան տնտեսվար ԼԵՆԴՐՈՒՇ ԴԱՎԹՅԱՆԸ՝ ծնված 30.08.1953թ., նձնագիր՝ AA 0362870, տրված 19.06.1996թ. 051-ի կողմից /վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 19.06.2011թ./ հաշվառված ք. Միսիան, Ն.Ստեփանյան փողոց, տուն 14, այսուհետ՝ <<ՎԱՐՁԱԿԱՆ>>, մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 16.03.2010թ. կնքված թիվ 006 վարձակալության պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 3.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հետագա համագործակցության նպատակով և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1 կետը՝ կողմերը որոշեցին հաստատել 2011թ Պայմանագրի ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակաույցը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2011թ. հունվարի մեկից ծագած հարաբերությունների նկատմամբ:

3. Երկու հազար տասը թվականի մարտի տասնվեցին կնքված և սեղանամատյանում թիվ 287 համարով գրանցված վարձակալության պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

4.Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս /4/ հավասարազոր օրինակից: Մեկը պահվում է Միսիանի նոտարական տարածքում, իսկ մյուսները տրվում են կողմերին:

5.Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6. Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

<<ՎԱՐՉԱՏՈՒ>>

<<ՎԱՐՉԱԿԱԼ>>

ԱՎԵՏ ԼԱՎՐԵՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ


ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ


Լիազորագրով՝

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԱՐՄԵՆ ԿՈՍՏՈՒՆԱՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Լիազորագրով՝


 *Ավետ Լավրենտի Սարգսյան*

ԼԵՆԴՐՈՒՇ ԴԱՎԹՅԱՆ


Հայաստանի Հանրապետություն, քաղաք Միսիան
Երկու հազար տասնմեկ թվականի փետրվարի մեկին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Միսիան տարածքի նոտար ՆՈՐԱՅՐ ԲԱՂՈՒՍՅԱՆԻ կողմից:
Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, երանց գործունեությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում հա. 110 -ով:
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար:



Ն.Լ.ԲԱՂՈՒՍՅԱՆ


ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Վճարման ժամանակացույց

ՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊՐԱՆՔՆԵՐԻ, ԽՅՈՒԹՅՈՒՆՆԵ ՄԱՎԱՆՈՒՄԸ	Նախատեսվում է ֆինանսավորել 2011թ-ի պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում*												
	1- ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ			Ընդամենը /հազ. դր./
	հունվ վայր	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
Ոչ բնակելի տարածքի ընթացակարգություն	185.0	270.0	405.0	540.0	675.0	810.0	945.0	1080.0	1215.0	1350.0	1485.0	1620.0	1620.0

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

<<ՎԱՐՉԱՏՈՒ>>

<<ՎԱՐՉԱԿԱԼ>>

ԱՎԵՏ ԼԱՎՐԵՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ


ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ


Լիազորագրով՝

ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԱՐՄԵՆ ԿՈՍՏՐԱՐԻ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Լիազորագրով՝



ԼԵՆԻՆԻՅ ԴԱՎԹՅԱՆ


Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր 2

16.03.2010 թ. կնքված թիվ 006 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԱՆՈՒ ՄԱՍԻՆ

Երկու հազար տասներկու թվականի փնտրվարի ըստնյութին ք. Սիսիան


Մենք, ԱՎԵՏ ԼԱՎՐԵՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆՍ, ծնված՝ 22.09.1968 թ., անձնագիր AG 0647892, տրված՝ 22.03.2006 թ. 007-ի կողմից /կապերականության ժամկետը նրկարածոված է մինչև 22.03.2016 թ./, հաշվառված՝ ք. Սիսիան, Իսրայել-Օրի փողոց, շենք 4, բն. 4, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ԱՐՄԵՆ ԿՈՄՈՆԱՐԻ ՆԵՐՄԻՍՅԱՆԸ, ծնված 17.07.1968 թ., անձնագիր AH 0294909, տրված 16.01.2007 թ. 051-ի կողմից, հաշվառված՝ ք. Սիսիան, Երվանդազուրկ փողոց, շենք 2ա, բն. 22, ԱՐՄԵՆ ԿՈՄՈՆԱՐԻ ՆԵՐՄԻՍՅԱՆ, ծնված 17.07.1968 թ., անձնագիր AH 0294909, տրված 16.01.2007 թ. 051-ի կողմից, հաշվառված՝ ք. Սիսիան, Երվանդազուրկ փողոց, շենք 2ա, բն. 22 այսուհետ «ՎԱՐՁԱՏՈՒ» և «ՀՀ ԿԱ պնտական նրկամուտների կրմիտնի աշխատավազմ» պնտական կատարարական հիմնարկը / գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մ. Խորենացու 3/, որի անունից 16.02.2012 թ. տրված թիվ 4253/18 լիազորագրով հանդես է գալիս Սյունիքի տարածաշրջանային մարտատան տնտեսվար ԼԵՆԴՐՈՇ ԱՐԱՄԻ ԴԱՎԹՅԱՆԸ, ծնված՝ 30.08.1953 թ., անձնագիր՝ AM 0328105 տրված՝ 07.06.2011 թ. 051-ի կողմից թ. 051-ի կողմից, հաշվառված՝ ք. Սիսիան,


Ն. Սանիսիայան փողոց, տուն 14, այսուհետ «ՎԱՐՁԱԿԱԼ.» մյուս կողմից, այսուհետ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 16.03.2010 թ. կնքված թիվ 006 վարձակալության պայմանագրի / այսուհետ՝ Պայմանագիր / 3.1 կետը, կնքվեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:


1. Հնտագա համագործակցության նպատակով և հիմք ընդունելով Պայմանագրի 3.1 կետը՝ կողմերը որոշեցին հաստատել 2012 թ. Պարմանագրի Ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանների տարածվում են կողմերի միջև 2012 թ. հունվարի մեկից ծագած հարաբերությունների նկատմամբ:
3. Երկու հազար տասը թվականի մարտի տասնվեցին կնքված և ստորագրված թիվ 287 համարով գրանցված վարձակալության պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, 2/երկու/ հավասարազոր օրինակից: Մեկը պահվում է Սիսիան նտարական տարածրի նտարական տարածրում, մյուսը տրվում է կողմերին:
5. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից
6. Սույն համաձայնագրի հավելված 1-ը՝ հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

« ՎԱՐՁԱՏՈՒ »

« ՎԱՐՁԱԿԱԼ. »

ԱՎԵՏ ԼԱՎՐԵՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ
ԼԻԱԶՈՐԱԳՐՈՎ
ԱՐՄԵՆ ԿՈՄՈՆԱՐԻ ՆԵՐՄԻՍՅԱՆ


ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՁՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԼԻԱԶՈՐԱԳՐՈՎ
ԼԵՆԴՐՈՇ ԴԱՎԹՅԱՆ


ԱՐՄԵՆ ԿՈՄՈՆԱՐԻ ՆԵՐՄԻՍՅԱՆ


Երկու հազար տասներկու թվականի փետրվարի քսանյոթին սույն համաձայնագիրը
վավերացված է իմ ՀՀ Միսիան նոտարական տարածքի նոտար՝ ՆՆՐԱՅՐ
ԲԱՂՈՒՄՅԱՆԻ կողմից:

Կողմերը համաձայնագիրը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնուշխուն
գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը նրա
ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույրի նկատմամբ իրավունքները
ստուգված են:



Գրանցված է սեղանամատյանում----- 418

Գանձված է պետ. տուրք և ծառայության
վճար համաձայն „ ՀՀ պետ. տուրքի մասին
և „ ՀՀ նոտարիատի մասին օրենքների „

ՆՈՏԱՐ

Ն.Լ. ԲԱՂՈՒՄՅԱՆ

Երկու հազար տասներկու թվականի փետրվարի քսանյոթին սույն համաձայնագիրը փակնագրված է իմ ՀՀ Սիսիան նոտարական տարածքի նոտար՝ ՆՈՐԱՅՐ ԲԱՂՈՄՅԱՆԻ կողմից:


Կողմերը համաձայնագիրը ստորագրել են իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձի իրավունակությունը նրա ներկայագրուղջի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են:


1/8



Գրանցված է սնդանամատյանում-----

Գանձված է պևտ. տուրք և ծառայության վճար համաձայն „ ՀՀ պևտ. տուրքի մասին և „ ՀՀ նոտարիատի մասին օրենքների „

ՆՈՏԱՐ:  Ն.Լ. ԲԱՂՈՄՅԱՆ



Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր Յ

ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՐՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երկու հազար տասներեք թվականի փնտրվարի քառյոթին

ք. Սիսիան

ԱՎԵՏ ԼԱՎՐԵՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ և ՀՀ ԿԱ պետական նկատույնների կոմիտեի աշխատակազմի միջև 16.03.2010 թ. կնքված թիվ 006 սնդանառատյանով գրանցված Սիսիան նոտարական տարածքի նոտարի կողմից վավերացված ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ պայմանագրում փոփոխություն կատարելու մասին.

Մենք, ԱՎԵՏ ԼԱՎՐԵՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ, ծնված՝ 22.09.1968 թ. անձնագիր AG0647892, տրված 22.03.2006 թ. 007-ի կողմից, հաշվառված՝ ք. Սիսիան, Իսրայել-Օրի փողոց շենք 4, բն. 4, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ԱՐՄԵՆ ԿՈՍՏՈՆԱՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ, ծնված 17.07.1968 թ., անձնագիր AH 0294909, տրված 16.01.2007 թ. 051-ի կողմից, հաշվառված՝ ք. Սիսիան, Շիրվանգաղն փողոց, շենք 2ա, բն. 22, մի կողմից և ՀՀ ԿԱ պետական նկատույնների կոմիտեի աշխատակազմը, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՅԱՆԸ ծնված՝ 05.08.1963 թ. անձնագիր AC0296450 տրված 27.08.1998 թ. 009-ի կողմից, / վավերականության ժամկետը նրկարածված է մինչև 27.08.2013 թ./ հաշվառված՝ ք. Երևան, Մալախանի 3-րդ փողոց, տուն 19, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

Կողմերը որոշել են 16.03.2010 թվականին կնքված Սիսիան նոտարական տարածքի նոտարի կողմից վավերացված թիվ 006 սնդանառատյանում գրանցված ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Հնտագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին հաստատել պայմանագրի 2013 թ. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի :
2. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2013 թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:
3. Պայմանագրի 5.1 կետը սահմանել հետևյալ խմբագրությամբ « Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման և նոտարական վավերացման պահից և գործում է անժամկետ: Եթե տվյալ տարվա մինչև հունվարի 15-ը կողմերից որևէ մեկը վրոս կողմին գրավոր չի ծանուցում սույն պայմանագիրը լուծելու մասին, ապա այն համարվում է ևս մեկ տարով նրկարածված » :

1. Համաձայնագրի ուժի մեջ մտնելը և այլ պայմաններ

- 1.2. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից նոտարական վավերացմամբ :
- 1.3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու պահից համարվում է կողմերի միջև 16.03.2010 թ. կնքված ոչ բնականի տարածքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը :

Համկված 1
16.03.2010 թ. կնքված թիվ 006 վարձակալության
պայմանագրի փոփոխության

ՀՀ ԿԱ պետական նկատմունքների կոմիտեի

վճարման ժամանակացույց

Նախատեսվում է ֆինանսավորել 2013 թ.-ի անասնաբույժական միջոցների հաշվին, ընդ որում*

1-ին կտրամսյակ 2-րդ կտրամսյակ 3-րդ կտրամսյակ 4-րդ կտրամսյակ

հունվար փետրվար մարտ ապրիլ մայիս հունիս հուլիս օգոստոս սեպտեմբեր հոկտ. նոյեմբ. դեկտ. Ընդ. հազ.դր.
Գնման նշանակա
ապրանքների
ծառայությունների
անվանումը

Ոչ բնակելի
տարածքի
վարձակալություն

135.0	270.0	405.0	540.0	675.0	810.0	945.0	1080.0	1215.0	1350.0	1485.0	1620.0	1620.0
-------	-------	-------	-------	-------	-------	-------	--------	--------	--------	--------	--------	--------

վճարման նշանակա գումարները ներկայացված են աճողական կարգով :

« ՎԱՐՁԱՏՈՒ »




« ՎԱՐՁԱԿԱԼ »

ԱՎԵՏ ԼԱՎՐԵՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ
Լիազորագրով՝

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՁՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ԱՐՄԵՆ ԿՈՄՈՒՆԱՐԻ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Լիազորագրով՝ ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՅԱՆ



ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 4

16.03.2010թ. կնքած թիվ 006 վարձակալության պայմանագրում փոփոխություն
կատարելու մասին

ՀՀ քաղաք Սիսիան

Երկու հազար տասնչորս թվականի մարտի քսանին

Մենք՝ ԱՎԵՏ ԼԱՎՐԵՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆՍ, ծնված 22.09.1968թ., անձնագիր AG 0647892, տրված 22.03.2006թ. 007-ի կողմից, հաշվառված ք. Սիսիան, Իսրայել- Օրի փողոց, շ. 4, բն. 4, որի անունից լիազորագրով հանդես է գալիս ԱՐՄԵՆ ԿՈՆՈՒՆԱՐԻ ՆԵՐՍԻՍՅԱՆԸ, ծնված 17.07.1968թ., անձնագիր AH 0294909, տրված 051-ի կողմից 16.01.2007թ., հաշվառված ք. Սիսիան, Շիրվանզադե փողոց, շ. 2ա, բն. 22, այսուհետ՝ «ՎԱՐՁԱՏՈՒ» և ««ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմ» պետական կառվարչական հիմնարկը /գտնվելու վայրը՝ ք. Երևան, Մ.Խորենացու 3/, որի անունից հանդես է գալիս աշխատակազմի ղեկավար Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆԸ, այսուհետ՝ «ՎԱՐՁԱԿԱԼ», մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով «Քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով «Կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշման 50-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին հաստատել \$ինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2014թ. հունվարի մեկից ծագած հարաբերությունների նկատմամբ:
3. Երկու հազար տասը թվականի մարտի տասնվեցին կնքված և սեղանամատյանում թիվ 287 համարով գրանցված վարձակալության պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու/2/ հավասարազոր օրինակից և տրվում են կողմերին:
5. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
6. Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>

ԱՎԵՏ ԼԱՎՐԵՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ

«ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Սյունիքի մարզ, ք.Սիսիան, Շիրվանզադեի -2ա/22

ք. Երևան, Մ.Խորենացու-7
«ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն»
Հ/Կ 900013202016
ՀՎՀՀ 02591206

ԱՇԻԲ ՓԲԸ Սիսիանիմ/6


Հ/Կ 247150057575

AH0294909 16.01.07թ 051

Լիազորված անձ՝

«ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Ներսիսյան



ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Վճարման ժամանակացույց

N	Ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնա. դասակարգման հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել 2014թ. արտաբյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ՀՀ Սյունիքի մարզի Շաքի գյուղում գտնվող Երևան-Գորիս ավտոմայրուղուն կից վարչական շենքից 100քմ տարածքի վարձակալություն	4216	270.0	405.0	540.0	675.0	810.0	945.0	1 080.0	1 215.0	1 350.0	1 620.0	1 620.0

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>

ԱՎԵՏ ԱՎՐԵՆՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ


Սյունիքի մարզ, ք.Սիսիան, Շիրվանզադեի -2ա/22

ԱՇԻԲ ՓԲԸ Սիսիանիմ/6

Հ/Հ 247150057575

AH0294909 16.01.07թ 051

Լիազորված անձ՝



Ա.Ներսիսյան

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

ք. Երևան, Մ.Խոզրենացու-7

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900013202016

ՀՎՀՀ 02591206

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ս. Գևորգյան

